Ծրագրի ֆինանսական հաշվետվություններ և Անկախ աուդիտորի եզրակացություն

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ

Էլեկտրամատակարարման հուսալիության ծրագիր

Վարկ 8055-AM

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և այդ ամսաթվին ավարտված տարվա համար և
2021թ. ապրիլի 30-ի դրությամբ և 2021թ. հունվարի 1-ից մինչև 2021թ. ապրիլի 30-ն ընկած ժամանակաշրջանի համար

Բովանդակություն

Անկախ աուդիտորի եզրակացություն	3
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	7
Ծրագրի ֆինանսավորման աղբյուրների և դրանց օգտագործման մասին հաշվետվություն	8
Ըստ Ծրագրի բաղադրիչների ֆինանսավորման օգտագործման մասին հաշվետվություն	10
ԾՄՀ ընթացակարգերով դրամական միջոցների ստացման դիմումներ	11
Հատուկ հաշվի հաշվետվություն	12
Ծրագրի ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	13

Անկախ աուդիտորի եզրակացություն

Գրանթ Թորնթոն ՓԲԸ
Երևան Պլազա բիզնես կենտրոն
ՀՀ, ք. Երևան 0015
Գրիգոր Լուսավորչի 9
Հ. + 374 10 50 09 64/61

Grant Thornton CJSC
Yerevan Plaza Business Center
9 Grigor Lusavorich Street,
Yerevan 0015, Republic of Armenia
T + 374 10 50 09 64/61

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի բաժնետիրոջը

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկի (ՎԶՄԲ) 8055-AM վարկային համաձայնագրի շրջանակներում ֆինանսավորվող Էլեկտրամատակարարման հուսալիության ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) կից ներկայացված Ծրագրի ֆինանսական հաշվետվությունների աուդիտ, ընդ որում այդ հաշվետվությունները ներառում են 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և 2021թ. ապրիլի 30-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և այդ ամսաթվին ավարտված տարվա և 2021թ. ապրիլի 30-ի դրությամբ և 2021թ. հունվարի 1-ից մինչև 2021թ. ապրիլի 30-ն ընկած ժամանակաշրջանի Ծրագրի ֆինանսավորման աղբյուրների և դրանց օգտագործման մասին հաշվետվությունները, 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և այդ ամսաթվին ավարտված տարվա ըստ Ծրագրի բաղադրիչների ֆինանսավորման օգտագործման մասին հաշվետվությունը, հատուկ հաշվի հաշվետվությունը, ինչպես նաև ծախսերի մասին հաշվետվությունը (ԾՄՀ), որը ներկայացվել է Համաշխարհային Բանկ՝ 2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար և 2021թ. հունվարի 1-ից մինչև 2021թ. ապրիլի 30-ն ընկած ժամանակաշրջանի համար՝ 8055-AM վարկային համաձայնագրի շրջանակներում համալրումները հիմնավորելու նպատակով, ինչպես նաև Ծրագրի ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները՝ ներառյալ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով՝ կից Ծրագրի ֆինանսական հաշվետվությունները տալիս են Էլեկտրամատակարարման հուսալիության ծրագրի՝ 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և 2021թ. ապրիլի 30-ի դրությամբ ֆինանսական վիճակի, ինչպես նաև 2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա և 2021թ. հունվարի 1-ից մինչև 2021թ. ապրիլի 30-ն ընկած ժամանակաշրջանի ընթացքում ստացված ֆոնդերի և ճանաչված ծախսերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն ծանոթագրություն 2-ում նկարագրված հաշվապահական հաշվառման քաղաքականության, Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկի ուղեցույցների, 8055-AM վարկային համաձայնագրի համապատասխան հոդվածների:

Ի հավելումն, մեր կարծիքով ներկայացված ԾՄՀ-ները, ինչպես նաև դրանց պատրաստման համար ներդրված ներքին վերահսկողությունը և ընթացակարգերը կարող են վստահելի հիմք հանդիսանալ 8055-AM վարկային համաձայնագրի շրջանակներում համալրումների համար:

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն իրականացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ *«Աուդիտորի պատասխանատվությունը Ծրագրի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում: Մենք անկախ ենք «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ից (այսուհետ՝ «Ընկերություն»)՝ համաձայն Հաշվապահների միջազգային դաշնության պրոֆեսիոնալ հաշվապահների վարքագրքի (ՀՄԴ-ի Վարքագիրք) և Հայաստանի Հանրապետությունում կիրառելի՝ ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նկատմամբ վարքագծի պահանջների, և մենք կատարել ենք վարքագծի նկատմամբ մեր մյուս պարտականությունները՝ այդ պահանջների համաձայն: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Հանգամանքների շեշտադրում

- Մենք ուշադրություն ենք հրավիրում Ծրագրի ֆինանսական հաշվետվություններին կից 2-րդ ծանոթագրության վրա, որտեղ նկարագրվում է հաշապահական հաշվառման հիմունքը: Ծրագրի ֆինանսական հաշվետվությունները պատրաստված են օժանդակելու Ընկերության ղեկավարությանը՝ ՎԶՄԲ ֆինանսական հաշվետվությունների ներկայացման պահանջներին համապատասխանելու համար: Ուստի, Ծրագրի ֆինանսական հաշվետվությունները չեն կարող կիրառվել այլ նպատակով: Մեր կարծիքը չի ձևափոխվել այս հանգամանքի առնչությամբ:
- Մենք ուշադրություն ենք հրավիրում Ծրագրի ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն 3-ի վրա, որտեղ նշվում է, որ Ծրագրի փակման ամսաթիվը 2020թ. դեկտեմբերի 31-ն է: Մեր կարծիքը չի ձևափոխվել այս հանգամանքի առնչությամբ:

Ղեկավարության պատասխանատվությունը Ծրագրի ֆինանսական հաշվետվությունների համար

Ընկերության ղեկավարությունը պատասխանատու է սույն Ծրագրի ֆինանսական հաշվետվությունները ծանոթագրություն 2-ում նկարագրված հաշվապահական հաշվառման քաղաքականության, ՎԶՄԲ ուղեցույցների, ինչպես նաև 8055-ԱՄ վարկային համաձայնագրի համապատասխան հոդվածների համաձայն պատրաստելու և արժանահավատորեն ներկայացնելու համար: Այդ նպատակով ղեկավարությունը սահմանում է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել Ծրագրի ֆինանսական հաշվետվություններ, որոնք ազատ են խարդախության կամ սխալի արդյունքում էական խեղաթյուրումից:

Կառավարման օղակներում ներգրավված անձիք պատասխանատու են Ծրագրի ֆինանսական հաշվետվությունների կազմման գործընթացը վերահսկելու համար:

Աուդիտորի պատասխանատվությունը Ծրագրի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում՝ խարդախությունների կամ սխալների հետևանքով Ծրագրի ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրումներից զերծ լինելու վերաբերյալ, ինչպես նաև ներկայացնել աուդիտորի եզրակացություն, որը կներառի մեր կարծիքը: Ողջամիտ հավաստիացումը բարձր աստիճանի հավաստիացում է, սակայն այն երաշխիք չի հանդիսանում, որ ԱՄՍ-ների համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումներ, երբ այդպիսիք կան: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի հետևանքով և համարվում են էական, եթե ակնկալվում է, որ դրանք առանձին-առանձին կամ միասին վերցված կարող են ազդել այս ֆինանսական հաշվետվությունների օգտագործողների՝ դրանց հիման վրա կայացրած տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համապատասխան իրականացվող աուդիտի շրջանակներում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն ամբողջ աուդիտի ընթացքում: Բացի այդ, մենք.

- Հատկորոշում և գնահատում ենք Ծրագրի ֆինանսական հաշվետվություններում խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք այդ ռիսկերին ուղղված աուդիտորական ընթացակարգեր, և ձեռք ենք բերում բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար: Խարդախության արդյունք հանդիսացող էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկն ավելի մեծ է, քան սխալի հետևանքով առաջացած խեղաթյուրման չբացահայտման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, փաստաթղթերի կեղծում, միտումնավոր բացթողումներ, կեղծ հայտարարությունների տրամադրում կամ ներքին վերահսկողության համակարգի չարաշահում:
- Պատկերացում ենք կազմում աուդիտին առնչվող ներքին վերահսկողության վերաբերյալ, որպեսզի մշակենք համապատասխան աուդիտորական ընթացակարգեր, բայց ոչ Ընկերության ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության պատշաճությունը, ինչպես նաև ղեկավարության կատարած հաշվապահական գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:
- Գնահատում ենք Ծրագրի ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև Ծրագրի ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Grant Thornton

Այլ հարցերի հետ մեկտեղ, մենք հաղորդակցում ենք ղեկավարության հետ աուդիտի պլանավորված շրջանակների և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված էական թերացումների վերաբերյալ, որոնք ներառում են աուդիտի ընթացքում մեր կողմից բացահայտված ներքին վերահսկողության կարևոր թերությունները:

Արմեն Հովհաննիսյան

Տնօրեն

Էմիլ Վասիլյան

Առաջադրանքի պատասխանատու

5 մայիսի 2021թ.

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

ԱՄՆ դոլար	Ծանոթ.	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2021թ. ապրիլի 30-ի դրությամբ
Ակտիվներ			
Ծրագրի կուտակային ծախսեր		42,541,493	42,541,493
Կանխավճարներ	4	97,342	8,537
Ընդամենը ակտիվներ		42,638,835	42,550,030
Ֆոնդեր և պարտավորություններ			
Ծրագրի կուտակային ֆինանսավորում		42,775,066	42,694,422
Փոխարժեքային տարբերություն		(136,231)	(144,392)
Ընդամենը ֆոնդեր և պարտավորություններ		42,638,835	42,550,030

Ծրագրի ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2021թ. մայիսի 5-ին՝

Հայկ Հարությունյան
Գլխավոր տնօրեն

Գևորգ Մուրադյան
Հաշվապահական հաշվառման բաժնի պետ/
Գլխավոր հաշվապահ

Այս հաշվետվությունը պետք է ընթերցվի Ծրագրի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 13-ից մինչև 20-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ծրագրի ֆինանսավորման աղբյուրների և դրանց օգտագործման մասին հաշվետվություն

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և նույն ամսաթվին ավարտված տարվա համար
ԱՄՆ դոլար

	Փաստացի		Պլանավորված		Տարբերություն		
	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Ծրագիր
Ֆոնդերի աղբյուրներ							
ՎԶՄԲ վարկ 8055-ԱՄ (ծանոթ. 5)	485,894	34,146,230					
Կառավարության համաֆինանսավորում	85,627	7,830,157					
«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ ֆինանսավորում	1,990	354,059					
Այլ եկամուտ (ծանոթ. 8)	444,262	444,620					
Ընդամենը	1,017,773	42,775,066					
Փոխարժեքային տարբերություն	5,250	(136,231)					
Նվազեցնել. Ֆինանսավորման օգտագործում							
Ապրանքներ, աշխատանքներ, ոչ խորհրդատվական ծառայություններ, խորհրդատուների ծառայություններ, ներառյալ՝ դասընթացներ և աուդիտ, և Ծրագրի լրացուցիչ գործառնական ծախսեր*	771,935	40,013,484	627,564	39,869,113	144,371	144,371	41,184,047
Ծրագրով նախատեսված հողի ձեռքբերման/բողոքների դիտարկման և բավարարման մեխանիզմներ	19,338	1,712,056	100,640	1,793,358	(81,302)	(81,302)	2,000,000
Նախապատրաստման կանխավճարի փոխհատուցում	-	718,453	-	718,453	-	-	718,453
Սկզբնավճար	-	97,500	-	97,500	-	-	97,500
Ընդամենը	791,273	42,541,493	728,204	42,478,424	63,069	63,069	44,000,000
Շրջանառու կապիտալի զուտ նվազում (ծանոթ. 6)	231,750	97,342					

* Տվյալ գումարում ներառված է Կառավարության համաֆինանսավորման միջոցներից կապալառուների համար նախկինում վճարված ոչ ռեզիդենտի շահութահարկի՝ 2020թ.դեկտեմբերի 31-ի դրությամբ առկա մնացորդի ծախսագրումը (123,123 ԱՄՆ դոլար)՝ պայմանավորված Ծրագրի ավարտով:

Այս հաշվետվությունը պետք է ընթերցվի Ծրագրի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 13-ից մինչև 20-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ծրագրի ֆինանսավորման աղբյուրների և դրանց օգտագործման մասին հաշվետվություն (շարունակություն)

2021թ. ապրիլի 30-ի դրությամբ և 2021թ. հունվարի 1-ից մինչև 2021թ. ապրիլի 30-ն ընկած ժամանակաշրջանի համար
ԱՄՆ դոլար

	Փաստացի		Պլանավորված		Տարբերություն		
	2021թ. հունվարի 1-ից մինչև 2021թ. ապրիլի 30-ն ընկած ժամանա-կաշրջան	2021թ. ապրիլի 30-ի դրությամբ	2021թ. հունվարի 1-ից մինչև 2021թ. ապրիլի 30-ն ընկած ժամանա-կաշրջան	2021թ. ապրիլի 30-ի դրությամբ	2021թ. հունվարի 1-ից մինչև 2021թ. ապրիլի 30-ն ընկած ժամանա-կաշրջան	2021թ. ապրիլի 30-ի դրությամբ	Ծրագիր
Ֆոնդերի աղբյուրներ							
ՎԶՄԲ վարկ 8055-ԱՄ (ծանոթ. 5)	(80,644)	34,065,586					
Կառավարության համաֆինանսավորում	-	7,830,157					
«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ ֆինանսավորում	-	354,059					
Այլ եկամուտ	-	444,620					
Ընդամենը	(80,644)	42,694,422					
Փոխարժեքային տարբերություն	(8,161)	(144,392)					
Նվազեցնել. Ֆինանսավորման օգտագործում							
Ապրանքներ, աշխատանքներ, ոչ խորհրդատվական ծառայություններ, խորհրդատուների ծառայություններ, ներառյալ՝ դասընթացներ և աուդիտ, և Ծրագրի լրացուցիչ գործառնական ծախսեր*	-	40,013,484	-	39,869,113	-	144,371	41,184,047
Ծրագրով նախատեսված հողի ձեռքբերման/բողոքների դիտարկման և բավարարման մեխանիզմներ	-	1,712,056	-	1,793,358	-	(81,302)	2,000,000
Նախապատրաստման կանխավճարի փոխհատուցում	-	718,453	-	718,453	-	-	718,453
Սկզբնավճար	-	97,500	-	97,500	-	-	97,500
Ընդամենը	-	42,541,493	-	42,478,424	-	63,069	44,000,000
Շրջանառու կապիտալի զուտ նվազում (ծանոթ. 6)	(88,805)	8,537					

Այս հաշվետվությունը պետք է ընթերցվի Ծրագրի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 13-ից մինչև 20-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ըստ Ծրագրի բաղադրիչների ֆինանսավորման օգտագործման մասին հաշվետվություն

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և նույն ամսաթվին ավարտված տարվա համար
ԱՄՆ դոլար

	Փաստացի		Պլանավորված		Տարբերություն		
	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Ծրագիր
Մաս 1: Էլեկտրահաղորդման ցանցի ամրապնդում	761,107	37,464,267	712,640	37,415,801	48,467	48,467	38,702,500
Մաս 2: Տեխնիկական օժանդակություն	30,166	4,979,725	15,564	4,965,123	14,602	14,602	5,200,000
Ծավալների փոփոխությամբ պայմանավորված չնախատեսված ծախսեր	-	-	-	-	-	-	-
Գների փոփոխությամբ պայմանավորված չնախատեսված ծախսեր	-	-	-	-	-	-	-
Սկզբնավճար	-	97,500	-	97,500	-	-	97,500
Ընդամենը	791,273	42,541,493	728,204	42,478,424	63,069	63,069	44,000,000

2021թ. հունվարի 1-ից մինչև 2021թ. ապրիլի 30-ն ընկած ժամանակաշրջանում ֆինանսավորման միջոցների օգտագործում տեղի չի ունեցել:

Այս հաշվետվությունը պետք է ընթերցվի Ծրագրի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 13-ից մինչև 20-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

ԾՄՀ ընթացակարգերով դրամական միջոցների ստացման դիմումներ

2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար
ԱՄՆ դոլար

Դիմումի համար	Ապրանքներ, աշխատանքներ, ոչ խորհրդատվական ծառայություններ, խորհրդատուների ծառայություններ, ներառյալ՝ դասընթացներ և աուդիտ, և Ծրագրի լրացուցիչ գործառնական ծախսեր	Ծրագրով նախատեսված հողի ձեռքբերման/բողոքների դիտարկման և բավարարման մեխանիզմներ	Ընդամենը
DA-130	591,052	158,000	749,052
DA-133	58,214	-	58,214
Ընդամենը	649,266	158,000	807,266

2021թ. հունվարի 1-ից մինչև 2021թ. ապրիլի 30-ն ընկած ժամանակաշրջանի համար
ԱՄՆ դոլար

Դիմումի համար	Ապրանքներ, աշխատանքներ, ոչ խորհրդատվական ծառայություններ, խորհրդատուների ծառայություններ, ներառյալ՝ դասընթացներ և աուդիտ, և Ծրագրի լրացուցիչ գործառնական ծախսեր	Ծրագրով նախատեսված հողի ձեռքբերման/բողոքների դիտարկման և բավարարման մեխանիզմներ	Ընդամենը
DA-136	358,685	64,549	423,234
Ընդամենը	358,685	64,549	423,234

Ընկերության ղեկավարությունը նկատել է, որ 2021թ.-ին Ծրագրի հատուկ հաշվից Ընկերությանը հողի ձեռքբերման համար փոխհատուցված 64,549 ԱՄՆ դոլարի մեջ ներառված 20,702 ԱՄՆ դոլարը (10,871 հազար դրամին համարժեք) ավել է վճարվել և, հետևաբար, այդ գումարը 2021թ. ապրիլի 30-ին վերադարձվել է Համաշխարհային բանկ:

Այս հաշվետվությունը պետք է ընթերցվի Ծրագրի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 13-ից մինչև 20-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Հատուկ հաշվի հաշվետվություն

Վարկ 8055-ԱՄ
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և նույն ամսաթվին ավարտված տարվա համար
ԱՄՆ դոլար

Սկզբնական մնացորդ 2020թ. հունվարի 1-ի դրությամբ		1,381
Ավելացնել.		
Կուտակային չբացահայտված անհամապատասխանություն	-	
Վարկի համալրում տարվա ընթացքում	485,894	
	485,894	485,894
Նվազեցնել. Հատուկ հաշվից փոխհատուցում ՎՀՄԲ-ին տարվա ընթացքում		-
Հատուկ հաշվին կանխավճարով տրված գումարի ներկա մնացորդը (1)		487,275
Վերջնական մնացորդ 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		-
Ավելացնել.		
Տարվա ընթացքում վճարված ընդունելի ծախսերի գումար	487,275	
Ծառայության վճարներ (եթե առկա է)	-	
	487,275	487,275
Նվազեցնել. Ստացված տոկոսագումարներ (եթե կրեդիտագրվել են հատուկ հաշվին)		-
Ընդամենը հաշվառված կանխավճար (2)		487,275
Բացահայտման ենթակա անհամապատասխանություն (1) – (2)		-

2021թ. հունվարի 1-ից մինչև 2021թ. ապրիլի 30-ն ընկած ժամանակաշրջանում հատուկ հաշվում որևէ շարժ տեղի չի ունեցել:

Այս հաշվետվությունը պետք է ընթերցվի Ծրագրի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 13-ից մինչև 20-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ծրագրի ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1 Գործառնությունների բնույթը և ընդհանուր տեղեկատվություն

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետև՝ Ընկերություն) ստեղծվել է ՀՀ կառավարության 1998թ. հուլիսի 20-ի N450 որոշման հիման վրա՝ «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» դուստր ձեռնարկությունը վերակազմավորել «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերության, և ՀՀ կառավարության 1999թ. նոյեմբերի 23-ի N709 որոշման հիման վրա՝ «Էներգետիկ օբյեկտների մասնագիտացված պահպանություն» պետական փակ բաժնետիրական ընկերությունը վերակազմակերպել և միացնել «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» պետական փակ բաժնետիրական ընկերությանը: Ընկերությունը «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» դուստր ձեռնարկության, «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի և «Էներգետիկ օբյեկտների մասնագիտացված պահպանության» ՊՓԲԸ-ի՝ իրավահաջորդն է:

Ընկերությունն իրականացնում է էլեկտրամատակարարման հուսալիության ծրագիրը (այսուհետև՝ Ծրագիր), որը ֆինանսավորվում է 2011թ. հունիսի 1-ին կնքված թիվ 8055-AM վարկային համաձայնագրով՝ ստորագրված Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկի (այսուհետև՝ ՎԶՄԲ) և Հայաստանի Հանրապետության միջև: Նույն ամսաթվին ստորագրվել է Ծրագրի համաձայնագիրը Ընկերություն և ՎԶՄԲ-ի միջև: Համաձայն ՀՀ Ֆինանսների նախարարության և Ընկերության միջև 2011թ. նոյեմբերի 18-ին ստորագրված Ենթավարկային համաձայնագրի՝ ՀՀ Ֆինանսների նախարարությունը ՎԶՄԲ-ի կողմից 35,500,000 ԱՄՆ դոլար գումարի չափով տրամադրված վարկի գումարը փոխանցել (վերավարկավորել) է Ընկերությանը, որն էլ այդ միջոցները պետք է օգտագործի բացառապես Ծրագիրն իրականացնելու նպատակով:

Ծրագրի նպատակն է հաղորդիչ ցանցի հուսալիության բարձրացումն ու թողունակության մեծացումը:

Ծրագիրը բաղկացած է հետևյալ մասերից.

Մաս Ա. Էլեկտրահաղորդման ցանցի ամրապնդում

Աշխատանքների, ապրանքների և տեխնիկական աջակցության ապահովում, ներառյալ նաև հողի ձեռք բերման ու վերաբնակեցման հետ կապված փոխհատուցումներն ու բողոքի մեխանիզմները՝ ներկայումս գործող Հրազդանի ՋԷԿ-ից դեպի Շինուհայրի ենթակայան գնացող էլեկտրահաղորդիչ գծի փոխարինման համար:

Մաս Բ. Տեխնիկական օժանդակություն

Ապրանքների և տեխնիկական աջակցության, այդ թվում նաև ուսուցանման և գործառնական ծախսերի ապահովում Ընկերության համար՝ ուղղված իր կադրերի կարողությունների ամրապնդմանը տեխնիկական վերահսկողության, պլանավորման, գնումների, ֆինանսական կառավարման, Ծրագրի կառավարման և դաշտային աշխատանքների վերահսկման ոլորտներում:

Ծրագրի ֆինանսավորումը բաղկացած է հետևյալ մասերից.

Հոդված	Վարկի հատկացված գումարը (արտահայտված ԱՄՆ դոլարով)	Ֆինանսավորման ենթակա ծախսերի տոկոսը (առանց հարկերի)
Ծրագրի համար ապրանքներ, աշխատանքներ, ոչ խորհրդատվական ծառայություններ, խորհրդատվական ծառայություններ, ներառյալ՝ դասընթացներն ու աուդիտը, և Ծրագրի գործառնական ծախսեր	32,402,500	100%
Ծրագրով նախատեսված հողի ձեռք բերման /բողոքների դիտարկման և բավարարման մեխանիզմներ	2,000,000	100%
Նախապատրաստման կանխավճարի փոխհատուցում	1,000,000	Ընդհանուր դրույթների 2.07(ա) բաժնի համաձայն փոխհատուցման ենթակա գումար
Սկզբնական վճար	97,500	Վարկային Համաձայնագրի 2.03 բաժնի և Ընդհանուր դրույթների 2.07(բ) բաժնի համաձայն վճարման ենթակա գումար
Ընդամենը	35,500,000	

Ընկերության իրավաբանական հասցեն է՝ ՀՀ, ք. Երևան, Զ. Անդրանիկի 1:

2 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

2.1 Պատրաստման հիմքերը

Ծրագրի ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են հաշվապահական հաշվառման հաշվեգրման սկզբունքով, ինչպես նաև Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկի ուղեցույցի հոդվածների և թիվ 8055-AM վարկային համաձայնագրի համապատասխան պահանջների համաձայն: Կարևոր հաշվապահական հաշվառման քաղաքականությունները բացահայտված են ստորև:

2.2 Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (դրամ): Այս Ծրագրի ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ԱՄՆ դոլարով (ներկայացման արժույթ):

Ծրագրի ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս ԱՄՆ դոլարից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված հաշվարկային փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով այդ ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված փոխարժեքը. 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմում է 522.59 ՀՀ դրամ և 2021թ. ապրիլի 30-ի դրությամբ՝ 520.69 ՀՀ դրամ: Յուրաքանչյուր փոխարժեքային տարբերություն ճանաչվում է Ծրագրի ֆինանսավորման աղբյուրների և դրանց օգտագործման մասին հաշվետվությունում, և փոխարժեքային տարբերության կուտակված գումարը բացահայտվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում՝ «Փոխարժեքային տարբերություն» հոդվածում:

2.3 Ծրագրի ֆինանսավորում

Թիվ 8055-AM վարկային համաձայնագրի շրջանակներում հատկացված ֆինանսավորումը հաշվառվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում որպես «Ծրագրի կուտակային ֆինանսավորում» և ճանաչվում է յուրաքանչյուր համալրման ժամանակ: Ի լրումն՝ տարվա ընթացքում ստացված ֆոնդերը բացահայտվում են Ծրագրի ֆինանսավորման աղբյուրների և դրանց օգտագործման մասին հաշվետվությունում:

2.4 Այլ եկամուտ

Այլ եկամուտը ձևավորվում է տույժերից և տուգանքներից, այն գործընկերների մասով, որոնք պայմանագրերով սահմանված ժամկետներում չեն ավարտել աշխատանքները:

Այլ եկամուտը ճանաչվում է Ծրագրի ֆինանսական հաշվետվություններում, երբ կողմերի միջև կնքվում է փոխադարձ համաձայնագիր:

2.5 Ծրագրային ծախսեր

Ծրագրային ծախսերը ճանաչվում են հաշվեգրման սկզբունքով: Ծրագրի կուտակային ծախսերը բացահայտվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում՝ ակտիվներում: Ի հավելումն՝ ընթացիկ տարվա ծախսերը ներառվում են Ծրագրի ֆինանսավորման աղբյուրների և դրանց օգտագործման մասին և ըստ Ծրագրի բաղադրիչների ֆինանսավորման օգտագործման մասին հաշվետվություններում:

2.6 Կանխավճարներ

Կանխավճարները հաշվառվում են սկզբնական արժեքով: Դրանք ներառում են աշխատանքների և ծառայությունների մասով մատակարարներին վճարված գումարները, ինչպես նաև այլ վճարներ:

2.7 ՎԶՄԲ -ի ֆինանսավորում

Վարկային համաձայնագրի համար ընդունելի ծախսերի ֆինանսավորման նպատակով Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկը վճարումներ է կատարում՝ օգտագործելով հետևյալ վճարման մեթոդներից մեկը կամ մի քանիսը.

ա) Հատուցում

Բանկը կարող է հատուցել փոխառուին՝ նրա սեփական միջոցներով կատարված ընդունելի ծախսերը ֆինանսավորելու նպատակով:

բ) Կանխավճար

Բանկը կարող է առհաշիվ վարկային վճարում կատարել փոխառուի հատուկ հաշվին՝ ընդունելի ծախսերը ֆինանսավորելու նպատակով և դրանց կատարմանը զուգընթաց, որոնց համար հիմնավորող փաստաթղթերը պետք է ներկայացվեն ավելի ուշ:

գ) Ուղղակի վճարումներ

Բանկը փոխառուի հայցով կարող է վճարումներ կատարել ուղղակիորեն երրորդ անձանց՝ ընդունելի ծախսերի դիմաց:

դ) Հատուկ պարտավորագրեր

Բանկը կարող է վճարումներ կատարել երրորդ անձին հատուկ պարտավորագրի շրջանակներում ընդունելի ծախսերի փոխհատուցման համար փոխառուի գրավոր հաստատված հայցով, որը համաձայնեցված է փոխառուի և Բանկի կողմից:

3 Ծրագրի փակման ամսաթիվ

Համաձայն վարկային համաձայնագրի՝ Ծրագրի վերջնաժամկետ է սահմանվել 2020թ. դեկտեմբերի 31-ը՝ մինչև 2021թ. ապրիլի 30-ն արտոնյալ ժամանակահատվածով:

4 Կանխավճարներ

ԱՄՆ դոլար	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2021թ. ապրիլի 30-ի դրությամբ
«Տրակտեբել էնջինիրինգ» էս էյ	70,823	-
«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ	19,904	1,897
Այլ	6,615	6,640
	97,342	8,537

2021թ. ապրիլի 30-ի դրությամբ «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ին տրամադրված կանխավճարի մնացորդները ներկայացնում են Հայաստանի Հանրապետության կառավարության համաֆինանսավորման միջոցների հաշվին վճարված կանխավճարները:

Այլ կանխավճարները վճարվել են հողի ձեռքբերման համար բացված դեպոզիտային հաշիվներին:

5 Վարկ թիվ 8055-ԱՄ

ԱՄՆ դոլար	2020թ դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Հատուկ պարտավորագիր	-	10,171,467
ԾՄՀ և այլ ընթացակարգեր	807,266	11,773,649
Ուղղակի վճարներ	-	11,058,195
Հատուկ հաշվի կանխավճար	485,894	12,208,486
Հատուկ հաշվի կանխավճարի մարում	(807,266)	(11,785,252)
Սկզբնավճար	-	97,500
ԾՆԿ և ծառայության վճար	-	622,185
	485,894	34,146,230

ԱՄՆ դոլար	2021թ. հունվարի 1-ից մինչև 2021թ. ապրիլի 30-ն ընկած ժամանա-կաշրջան	2021թ. ապրիլի 30-ի դրությամբ
Հատուկ պարտավորագիր	-	10,171,467
ԾՄՀ և այլ ընթացակարգեր	423,234	12,196,883
Ուղղակի վճարներ	-	11,058,195
Հատուկ հաշվի կանխավճար	-	12,208,486
Հատուկ հաշվի կանխավճարի մարում	(423,234)	(12,208,486)
Փոխհատուցում	(80,644)	(80,644)
Սկզբնավճար	-	97,500
ԾՆԿ և ծառայության վճար	-	622,185
	(80,644)	34,065,586

6 Շրջանառու կապիտալի զուտ աճ/(նվազում)

ԱՄՆ դոլար	2020թ դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Բանկային հաշիվներում նվազում	(1,381)	-
Կանխավճարների աճ/(նվազում)	(192,378)	97,342
Կրեդիտորական պարտքերի նվազում	425,509	-
	231,750	97,342

ԱՄՆ դոլար	2021թ. հունվարի 1-ից մինչև 2021թ. ապրիլի 30-ն ընկած ժամանա-կաշրջանի համար	2021թ. ապրիլի 30-ի դրությամբ
Կանխավճարների աճ/(նվազում)	(88,805)	8,537
	(88,805)	8,537

7 «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ կողմից ստացված գումարների և ՀԲ փոխհատուցումների համադրում

Վարկ 8055-ԱՄ
2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար
ԱՄՆ դոլար

Հոդված	Դիմում	Ընկերություն	ՀԲ	Տարբերություն
Ծրագրի համար ապրանքներ, աշխատանքներ, ոչ խորհրդատվական ծառայություններ, խորհրդատվական ծառայություններ, ներառյալ՝ դասընթացներն ու աուդիտը, և Ծրագրի գործառնական ծախսեր				
	DA-130	591,052	591,052	-
	DA-133	58,214	58,214	-
		649,266	649,266	-
Ծրագրով նախատեսված հողի ձեռք բերման /բողոքների դիտարկման և բավարարման մեխանիզմներ				
	DA-130	158,000	158,000	-
		158,000	158,000	-
Հատուկ հաշվի կանխավճար/(մարում)				
	DA-129	5,000	5,000	-
	DA-130	(749,052)	(749,052)	-
	DA-131	53,000	53,000	-
	DA-132	5,000	5,000	-
	DA-133	(58,214)	(58,214)	-
	DA-134	67,000	67,000	-
	DA-135	355,894	355,894	-
		(321,372)	(321,372)	-
Ընդամենը		485,894	485,894	-

Վարկ 8055-AM
2021թ. հունվարի 1-ից մինչև 2021թ. ապրիլի 30-ն ընկած ժամանակաշրջանի համար
ԱՄՆ դոլար

Հոդված	Դիմում	Ընկերություն	ՀԲ	Տարբերություն
Ծրագրի համար ապրանքներ, աշխատանքներ, ոչ խորհրդատվական ծառայություններ, խորհրդատվական ծառայություններ, ներառյալ՝ դասընթացներն ու աուդիտը, և Ծրագրի գործառնական ծախսեր				
	DA-136	358,685	358,685	-
		358,685	358,685	-
Ծրագրով նախատեսված հողի ձեռք բերման /բողոքների դիտարկման և բավարարման մեխանիզմներ				
	DA-136	64,549	64,549	-
		64,549	64,549	-
Հատուկ հաշվի կանխավճար/(մարում)				
	DA-136	(423,234)	(423,234)	-
		(423,234)	(423,234)	-
Ընդամենը		-	-	-

8 Այլ եկամուտ

Ընկերությունը, հղում կատարելով իր գործընկերների հետ կնքված պայմանագրերի պայմաններին, հաշվարկել է լիկվիդացիոն վնասների գծով պարտավորություններ այն մատակարարների համար, որոնք պայմանագրերով սահմանված ժամկետներում չեն ավարտել աշխատանքները:

Քանի որ «Գամ Արակ Ինդուստրիալ» Քո ընկերությունը չի կարողացել աշխատանքներն ավարտել սահմանված ժամկետներում, վճարման ենթակա գումարը նվազեցվել է 444,262 ԱՄՆ դոլարով: Մնացորդն ամբողջությամբ վճարվել է «Գամ Արակ Ինդուստրիալ» Քո ընկերությանը: